«ԱՐՄԵՆԻԱ» ԹԵՐԹ – ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(130-ամյակների առթիվ)

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Սուլթանական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած անհավասար ու հերոսական գոյամարտի պատմության ընդհանուր շղթայի կարևորագույն, միաժամանակ ինքնատիպ օղակներից են XIX դարի 80-ականները, որոնք, չնայած իրենց դարակազմիկ վաղեմությանը, մինչ օրս պատշաճ ուշադրության չեն արժանացել ինչպես մայր հայրենիքի, այնպես էլ սփյուռքահայ պատմաբանների կողմից: Մինչդեռ այդ տասնամյակում էր, որ նոր ու գերադրական աստիճանի բարձրացավ հայ համազգային ազատագրական շարժման գաղափարաբանությունը, ամենուրեք սկսեցին թևածել Հայոց ազատ, անկախ, միասնական պետականության վերընձյուղման կոչերը, որոնք, քայլ առ քայլ բյուրեղանալով, ապագա գործողությունների ծրագրերի կերպարանք ստացան: Նախակուսակցական պայքարի այդ տասնամյակին իբրև օրգանական շարունակություն, բնականոն ձևով, հերթականությամբ ծնունդ առնելով, հրապարակ իջան ազգային երեք կուսակցությունները: Առաջնեկը Արմենականն էր, որի գաղափարական ակունքներում կանգնած էր արևմտահայ նշանավոր գործիչ, հեղափոխական-ազատագրական գաղափարների սերմնացան Մկրտիչ Փորթուգալյանը (1848–1921):

Պատմագիտական գրականության մեջ, սակայն, տարակարծություններ կան Փորթուգալյանի և Արմենական կուսակցության ստեղծման ու հետագա գործունեության ընթացքում կուսակցություն–Փորթուգալյան առնչությունների վերաբերյալ: Դրանից ելնելով՝ հարկ ենք համարում քննել այդ գործընթացը և Մ. Փորթուգալյան-կուսակցահիմնադիր աշակերտներ փոխհարաբերությունները՝ փորձելով արժևորել այն կարևոր ներդրումը, որ կատարեցին Արմենական կուսակցությունն ու նրա գաղափարական ակունքներում կանգնած, ազատաբաղձ սերունդ պատրաստելու գործում մեծ ավանդ ունեցած Մ. Փորթուգալյանը:

*1884 թ. Վանում Մ. Փորթուգալյանն իր գաղափարների ու մտահղացումների դարբնոց վարժապետանոցի 12 շրջանավարտների հետ հիմնում են «*Գործակցական միությունը*» (կամ որ նույնն է՝ Երկրագործական), որի նպատակն էր արտասահմանից գրականություն հայթայթել*

և «զարկ տալու ժողովրդին մտավոր զարգացման»[1]: Սակայն արևմտահայության ծանր վիճակը, Խրիմյան Հայրիկի «երկաթե շերեփի» քարոզը, հայրենասիրական մղումներն ու երիտասարդական խանդավառությունը նրանց ավելիին էին դրդում: Վերջիններս իրենց ապագա գործունեությունը ծրագրելու և առաջ տանելու համար հավաքվում էին Թերլեմեզյանների հնձանում՝ Խարի տանը, որը դառնում է «հայկական առաջին քաղաքական կուսակցության՝ Արմենական կազմակերպության առաջին օրրանը»[2]: Հենց այս տանը Մկրտիչ Ավետիսյան-Թերլեմեզյանի ղեկավարությամբ 1885 թ. աշնանը, երբ Մ. Փորթուգալյանն արդեն հեռացել էր Երկրից, Գրիգորիս Թերլեմեզյանը, Ռուբեն Շատվորյանը, Գևորգ Օտյանը, Գևորգ Աճեմյանը (գրող Գ. Մահարու հայրը), Մեսրոպ Պարութճյանը, Ղևոնդ Խանջյանը, Գրիգոր Պեռզիկյանը (Շիկահեր), Գարեգին Բաղեշցյանը, Գաբրիել Նաթանյանը և այլք «նախաձեռնարկ ըլլալով, կազմեցին առաջին հեղափոխական կուսակցությունը, որը կոչվեցավ Արմենական»[3]: Շուտով նրանց միացան անվանի հայդուկ, 1915 թ. Վանի հերոսամարտի ռազմական ղեկավար Արմենակ Եկարյանը, հայ մեծանուն գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանը (նա Մկրտիչ Ավետիսյանի հորեղբոր տղան էր), Մուշի և Բիթլիսի մասնաճյուղերի հիմնադիր Հայրապետ Ճանիկյանը, Պլովդիվի մասնաճյուղի հիմնադիր Արմեն Շիտանյանը, անվանի մտավորականներ՝ Արիստակես Ախիկյանը, Միքայել Նաթանյանը, Արտակ Դարբինյանը, Հովհաննես Գուլօղլյանը և ուրիշներ, որոնք հետո դարձան կուսակցության նշանավոր գործիչներ:

«Արմենականությունը ծնունդ առավ Վանի մեջ, ուր օրըստօրե հող գտավ Երկրին մեջ: Վանի ընտիր երիտասարդությունը, գործեց նվիրումով, անոր ոգիով ու ծրագրով»[4],– գրում է ՀՀԴ ականավոր գործիչ, երկար տարիներ Վանում գործող Կոմսը (Վահան Փափազյան): ՀՀԴ - կուսակցության տեսաբաններից Միքայել Վարանդյանը ևս միանգամայն ճիշտ տեսակետներ է ներկայացնում Արմենական կուսակցության սկզբնավորման և դրա համար գաղափարական նախադրյալներ ստեղծողների մասին: Անհնար է չհամաձայնել նրա հետևյալ կարծիքի հետ. «Հեղափոխական գաղափարի ամենեն առատ ցանքը կկատարվեր Վանի մեջ, ուր կ'ապրեր Խրիմյան (Վարագա վանքը), ուր հաստատված էր և Մկրտիչ Փորթուգալյան իր համբավավոր վարժապե-

---

[1] *Գ. Պ ե ռ զ ի կ յ ա ն. Խարի տուն.– «Արծվի Վասպուրականի», (Բոստոն), 1941, հ. 4, էջ 2:*

[2] *Ե. Տ ե ր - Մ կ ր տ չ յ ա ն. Գանձեր Վասպուրականի, հ. Ա, Բոստոն, 1966, էջ 496:*

[3] *Ս. Բ զ մ ի ր լ յ ա ն. Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին անձնական հուշերուս ընդմեջեն, Բեյրութ, 1962, էջ 26:*

[4] *Վ. Փ ա փ ա զ յ ա ն (Կոմս). Իմ Հուշերը, հ. Ա, Բոստոն, 1950, էջ 211:*

տանոցով»[5]: Նույն տեսակետն է արտահայտում նաև Վ. Ավետիսյանը. «Մ. Ավետիսյանի ղեկավարությամբ արևմտահայության մեջ ծնունդ առած առաջին և վերջին կուսակցությունը կյանքի կոչված է Վանի մեջ, իբրև կորիզ ունենալով Երկրագործական միությունը»[6]:

Կուսակցության կազմավորման պատմությունը, սակայն, այլ կերպ են ներկայացրել մեր ազատագրական շարժումների պատմության հարցերը լուսաբանած մի շարք հեղինակներ[7]: Նրանք առանձին ուսումնասիրության առարկա չդարձնելով Արմենական կուսակցության պատմությունը[8] և, հետևապես, խորամուխ չլինելով այդ հարցում, կրկնելով միմյանց՝ նշում են կուսակցության հիմնադրման այլ վայր ու այլ առաջնորդ: Այսպես՝ «Առաջին քիչ թե շատ կազմակերպված կուսակցությունը՝ 1885-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնված արմենականների կուսակցությունն էր»[9],– գրում է Վ. Պարսամյանը, իսկ մեկ այլ առիթով լրացնում, որ «նրա հիմնադիրն էր արևմտահայ մտավորական Մկրտիչ Փորթուգալյանը»[10]: Վաստակաշատ Լեոն էլ, Մ. Փորթուգալյանին սխալմամբ համարելով «Թիֆլիզահայ մանկավարժ ու գրող», ոչ միայն գրեթե նույն՝ «նա (Մ. Փորթուգալյանը – U. U.*) 1885-ի երկրորդ կեսից Մարսելում սկսեց հրատարակել □Արմենիա» անունով փոքրածավալ թերթը, որի պահպանության համար հիմնում է «Հայոց հայրենասիրական միությունը», տեսակետն է հայտնում, այլև այդ*

---

[5] *Տե՛ս Մ. Վարանդյան. Հ. Հ. Դաշնակցության պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932, հ. Բ, Կահիրե, 1950, Երևան, 1992, էջ 27:*

[6] *Վ. Ավետիսյան. Հայ հասարակական մտքի զարգացման Մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 161–162:*

[7] *Լեո. Թյուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934, էջ 44, Գ. Լազյան. Հայաստան և Հայ Դատը (վավերագրեր), Կահիրե, 1956, էջ 105–108, Մ. Սերոբյան. Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937, էջ 98–99, նույնի՝ Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Կահիրե, 1948, էջ 184, Կ. Իզմիրյան. Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Բեյրութ, 1964, էջ 124–126, Հ. Վարդանյան. Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում, Երևան, 1967, էջ 287, Վ. Փափազյան. նշվ. աշխ., էջ 130, Ջ. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 245, Հ. Երամյան. Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 255, Լ. Գազանճյան. Վերածնունդ Վան-Վասպուրականի, Բոստոն, 1950, էջ 210 և այլն:*

[8] *Դրվատելի բացառություններ են, թերևս, լիբանանահայ հետազոտող Վ. Ղազարյանի՝ «Արմենական կուսակցություն» (Բեյրութ, 1985), Ա. Կարապետյանի՝ «Արմենական կուսակցություն» թեկնածուական ատենախոսությունը և Ս. Սարգսյանի՝ «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.)» (Երևան, 2009) շահեկան մենագրությունները:*

[9] *Վ. Պարսամյան. Պատմագիտական աշխատություններ, Երևան, 1985, էջ 211:*

[10] *Վ. Պարսամյան և այլք. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 251:*

կազմակերպված, սեփական ծրագրով շարժումից է բխեցվում Արմենական կուսակցությունը[11]:

Հայ պատմագիտության մեջ այս հարցի առնչությամբ ձևավորվել է նաև մեկ այլ տեսակետ, համաձայն որի, Փորթուգալյանն ազգասիրական գործունեությամբ իր «Արմենիայով» սերմնացանը եղավ, մեծապես նպաստեց խնդրին, հուշեց գաղափարը, այրվեց այդ նպատակի համար, սակայն իրերի բերումով (աքսորը Վանից, ապա ընդհանրապես՝ Թուրքիայից) չդարձավ կուսակցության անմիջական հիմնադրողը: Սա, իհարկե, չի նսեմացնում ոչ նրա հիշատակը և ոչ էլ ստվեր գցում նրա հայրենասիրական ոգուն: Չէ՞ որ, ի վերջո, այդ խնդրի իրագործողները նրա սաներն էին՝ նրա գաղափարական դարբնոցում թրծված Մ. Ավետիսյանի առաջնորդությամբ:

Տարբեր տեսակետների առկայությունը շփոթի արդյունք է: Բանն այն է, որ ուսումնասիրողների մի զգալի մասը Արմենական կուսակցությունը բխեցնում են Մարսելում Մ. Փորթուգալյանի գլխավորությամբ «Արմենիայի» շուրջ համախմբված գործիչների կողմից հայ ազգային-ազատագրական պայքարը ղեկավարելու և ուղղորդելու համար ստեղծված «Հայոց հայրենասիրական միությունից»: Այսպես, «Փորթուգալյանի գաղափարների ու մտահղացումների ազդեցության տակ կազմակերպվեց «Հայոց հայրենասիրական միությունը» (այսուհետև՝ ՀՀՄ)՝ մի գաղտնի կազմակերպություն, որը սկիզբ դրեց Արմենական կուսակցության գործունեությանը»[12],– գրում է Ջ. Կիրակոսյանը:

Իրոք, Արմենական կուսակցության գաղափարական արմատները սնվում են Մ. Փորթուգալյանի գաղափարախոսությունից ու նրա «Արմենիայից», սակայն կուսակցությունը բխեցնել դրա ստեղծումից միայն չորս տարի հետո իրականում գործել սկսած «Հայոց հայրենասիրական միությունից», ճիշտ չէ: Նախ, միությունն ունեցել է ավելի համեստ խնդիր՝ նյութական և բարոյական օգնություն կազմակերպելով ապահովել «Արմենիա» թերթի անխափան գործունեությունը: «Եվ սակայն պատմական ճշմարտությունը կդրդե հայտարարել,– իրավացիորեն գրում է Ա. Դարբինյանը,– թե Մ. Փորթուգալյան, որ «Արմենիա» թերթին համընթաց ձեռնարկած է հիմնելու նաև «ՀՀ Միություն» անունով մարմին մը, և որ ավելի շատ նպատակ ուներ նպաստելու իր թերթին և օգնելու անոր գաղափարներուն տարածումին, ուղղակի կազմողը և հիմնադիրը չեղավ Արմենական կուսակցության»[13]: Եվ հետո, բոլորը խոսելով ՀՀՄ-ի մասին, չնչին բացառություններով, չեն նշում նրա ստեղծ-

---

[11] *Լ. Ե ռ. Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 47–49:*

[12] *Ջ. Կ ի ր ա կ ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 245: Ջ. Կիրակոսյանն այն անվանում է «Հայոց հայրենակցական միություն»:*

[13] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. Հայ ազատագրական շարժման օրերեն, 1947, Կահիրե, էջ 121:*

ման թվականը: Իսկ Վ. Ղազարյանը գրում է. «…փաստերը ցույց կուտան ընդհանրապես, որ ան կազմված է Արմենական կուսակցութենեն ետք»[14], ինչին գալիս է լրացնելու հետևյալը. «Արմենիայի» շուրջը համախմբված գործիչները 1889 թ. կազմակերպեցին «ՀՀ Միությունը», որի ծրագրային հիմքը Ռ. Պատկանյանի «Վարդապետարան Հայաստանի ազատագրության» գրքույկն էր»[15]: Վերջինս կազմված էր հարց ու պատասխանի ձևով: Այսպես, հարց. «Ո՞վ պիտի ազատի Հայաստանը օտարների ձեռքից»: Պատասխան. «Ինքը հայ ազգը պիտի ազատի Հայաստանը օտարների ձեռքից»: Ծրագրային այդ գրքույկում նշված էին հաջողության հասնելու ուղիներն ու միջոցները: Կետերից մեկում ասվում էր, որ յուրաքանչյուր հայրենասեր իր արյունն ու ունեցվածքը պետք է նվիրի Հայաստանի ազատագրության սուրբ գործին: Բայց նկատելի է մի անհամապատասխանություն, որը զարմանալիորեն վրիպել է շատերի ուշադրությունից: Մ. Փորթուգալյանը որոշ փոփոխություններով ու լրացումներով «Վարդապետարանը» հրատարակել է միայն 1889 թ. «նշանակալի հանգամանք է, որ 1889-ին Փորթուգալյանը… Առանց հեղինակի անվան հիշատակման, որոշ փոփոխություններով առանձին տետրակով լույս ընծայեց Արմենական կազմակերպության քրեդոն»[16]: Այս տեսակետն են արտահայտել նաև Լ.Էոն, Հ. Վարդանյանը և ուրիշներ: Սակայն վերն արդեն նշվեց, որ Արմենական կուսակցությունը նույնացնել «Հայոց հայրենասիրական միությանը» ճիշտ չէ և երկրորդ՝ մի՞թե կուսակցությունը, որի ամենակարևոր հատկանիշներից է ծրագրի առկայությունը, մինչև 1889-ը չուներ ծրագիր, օրինական հարցը նրանց մոտ բաց է մնում: Արմենական կուսակցությունը ծրագիր, իհարկե, ուներ:

Համենայն դեպս, եթե նկատի առնենք, որ մեզ հայտնի բոլոր աղբյուրներում ՀՀՄ-ի ստեղծման թվականի մասին միայն այս տվյալներն են, կարող ենք վստահորեն ասել, որ 1885 թ. ստեղծված կուսակցությունը (սա ընդունում են բոլոր ուսումնասիրողները) չէր կարող ծնվել նրանից տարիներ ավելի ուշ կազմակերպված միությունից[17]: Ամենայն հավանականությամբ, ամբողջովին անլեգալ գործող արմենականները

---

[14] *Վ. Ղ ա զ ա ր յ ա ն. Արմենական կուսակցությունը, Բեյրութ, 1985, էջ 10:*

[15] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 187:*

[16] *Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Երևան, 1956, էջ 124:*

[17] *Այս հարցերի մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Ս ա ր գ ս յ ա ն. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.), ն ո ւ յ ն ի՝ 1885–1908 թթ. հայ ազգային ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ, Երևան, 2010, ն ո ւ յ ն ի՝ «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Երևան, 2014:*

հետագայում օգտագործել են համեմատաբար ավելի «անմեղ» անվամբ գործող «Հայոց հայրենասիրական միության» պիտակը:

«Արմենականները հատկապես Վասպուրականի և Ատրպատականի մեջ գործած են նաև ՀՀ Միության անունով»[18] երկու պարզ պատճառով՝ նախ այդպիսի «անմեղ» անվամբ շատ գործ կարելի էր անել, քան՝ հակապետական, արգելված քաղաքական կուսակցության միջոցով: Երկրորդ, թե՛ Արմենական կուսակցությունը և թե՛ ՀՀՄ-ն սնվել ու հասակ էին առել նույն գաղափարական անդաստանում ու բացառված չէր նրանց շփումն և, ինչու չէ, նաև համագործակցությունը: Իսկ նույնացնել կուսակցությունը և ՀՀՄ-ն ճիշտ չէ, ինչպես որ սխալ է «նույնիսկ զայն (ՀՀՄ-ն) նկատել իբրև ծնուցիչ հայ քաղաքական առաջին կազմակերպության»[19]: «Ինքը՝ Ավետիսյանը,– վկայում է Ա. Դարբինյանը,– հիմնադիրը եղած էր այդ հեղափոխական կուսակցության և անոր գաղափարակիցները հետզհետե ամրացուցին նորաստեղծ այդ կազմակերպությունը»[20]:

Իսկ Մ. Փորթուգալյանին «կարելի է նկատել հոգևոր հայր մը արմենականության», ով սկզբից ևեթ ժխտում էր որևէ կապ Արմենական կուսակցության հետ և, քանի որ վերջինիս հիմնադրած «Արմենիա» լրագրի «պաշտոնը գաղափարի տարածումն էր հայ ժողովրդի մեջ», և թերթի խմբագրությունը երբեք «հավակնություն չէր ունեցել հայկական կամ հեղափոխական շարժման մը իր լրագրի անունով կոչելու» այլ իրենց առաքելությունը եղել էր «ողը մշակել, սերմանել և ջրել» որն էլ գործի ամենադժվար մասն էր: «սկ երբ ժամանակը հասունանար,– գրում էր Մ. Փորթուգալյանը,– ցանած սերմերն իրենք կծլեին, կմեծանային և կպտղաբերեին»: Իրեն հողի մշակ և հայ ժողովրդի մեջ ազատագրական գաղափարներ սերմանող համարող Մ. Փորթուգալյանը հայտարարում էր, թե ժողովուրդն է, որ այդ սերմերը պտղաբեր պիտի դարձներ: Մեր խնդիրը, մեր դատը՝ հայ ժողովրդի դատն է, համոզված արձանագրում էր Մ. Փորթուգալյանը: Այդ սկզբունքից ելնելով է, որ «կհայտարարենք, թե «Արմենիական» անունով հեղափոխական կուսակցություն մ'ալ երբեք չենք կազմակերպած, որովհետև մեր կուսակցությունն է արդեն Հայ ժողովուրդի հեղափոխական կուսակցությունը»[21]:

Այսպիսով, Արմենական կուսակցությունը հիմնադրվել է 1885-ին Վանում Մ. Ավետիսյանի կողմից՝ ավելի վաղ, քան «Հայոց հայրենասիրական միությունը»: Այս ամենն ավելի հիմնավոր դարձնելու համար

---

[18] *Ա. Ե կ ա ր յ ա ն. Հուշեր, Բեյրութ, 1985, էջ 40:*

[19] *Վ. Ղ ա զ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 11:*

[20] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 19:*

[21] *«Արմենիայի XXI շրջանի վերջավորության առիթով».– «Արմենիա», -44, 1906: Տե՛ս նաև՝ Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 125–126, Վ. Ղ ա զ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 14:*

քննարկենք կուսակցության ծրագրի հետ կապված որոշ խնդիրներ: Արմենականների առաջին ծրագիրն ընդունվել է 1885 թ., սակայն այն չի պահպանվել և մեզ չի հասել, որովհետև եղել է միայն ձեռագիր վիճակում ու չի բազմացվել «առաջնորդվելով մասնավորապես գաղտնապահության մասին որդեգրած սկզբունքեն,– վկայում է Ա. Դարբինյանը,– ձեռագիր ծրագրի սահմանափակ օրինակները, ընդամենը 7–8 օրինակ, պիտի մնային կեդրոնի ու մասնաժողովներու քով միայն, ի հարկին կարդացվելու համար ուր որ անկ է»[22]: Շտպագրելու ու չբազմացնելու նույն պատճառն են շեշտում նաև Վ. Ղազարյանը («ծրագիրը կպահվեր ձեռագիր վիճակում թելադրված գաղտնապահության մտահոգություններեն»[23]) և Լ. Ամեմյանը («Արմենական կուսակցությունը իր անդամներուն արգիլած էր ամեն մի հրապարակային արտահայտություն՝ թշնամիին որևէ փաստ չհայթայթելու կանխահոգութեամբ»[24]): Եթե նկատի ունենանք, որ 1894-ին ընդունված ծրագիրն առաջինի խմբագրված ու լրացված, գուցե նաև մասամբ փոփոխություններ կրած օրինակն է, ինչպես դա եղել է ու լինում է բոլոր կուսակցությունների և, մասնավորապես, ընդհատակում գտնվող կազմակերպությունների ու նրանց ծրագրերի առնչությամբ, ապա կարող ենք եզրակացնել, որ 1894 թ. ընդունված ծրագիրն ամբողջությամբ ներառում և արտահայտում է 1885 թ. ընդունված կուսակցության առաջին ծրագիրը:

1894 թ. ընդունված Արմենական կուսակցության ծրագրում ասվում էր, որ կազմակերպության նպատակն է «…հեղափոխությամբ Թյուրքիո հայ ժողովրդյան համար իրավունք ձեռք բերել ինքզինք ազատորեն կառավարելու, որով կարող կլինի իբրև մարդ ապրելու միջոցներ գիտնալ և զանոնք գործադրել ժամանակի պահանջմանց համեմատ»[25]: Սակայն սկզբնական շրջանում արմենականները գործնականում դեմ էին բռնի միջոցներին և թուրքական պետությունից վարչական բարենորոգումներ ստանալու ճանապարհով փորձում էին ապահովել հայ ժողովրդի ունեցվածքի, պատվի իրավունքը:

Առաջին հերթին արմենականները զարկ տվին կրթական գործին: Ըստ էության, արմենականների գործողության շառավիղը հիմնականում սահմանափակվեց Վան-Վասպուրականի տարածքով: Նրանց մարտավարությունը զգուշավոր իրատեսական էր և հիմնականում ծավալվում էր մշակութային-կրթական քողի տակ: Հետագայում՝ թուրքական ռեժիմի մեջ եղած փոփոխություններին ու իրադարձություններին զուգընթաց, երբ արևմտահայության դեմ սանձազերծված հալա-

[22] *Ա. Դ ա ր բ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 124:*
[23] *Վ. Ղ ա զ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 17:*
[24] *Ա. Ե կ ա ր յ ա ն. նշվ. աշխ., առաջաբանը գրեց Լ. Ամեմյանը, էջ 1:*
[25] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 427, ց. 1, գ. 66, թ. 7:*

ծանքներն սկսեցին շեշտված քաղաքական նպատակներ հետապնդել, նրանք իրենց ծրագրում որոշակիորեն դրեցին Հայաստանի ազատագրման հարցը: Իսկ թե ինչպիսի վարչակարգ էր լինելու, դա թողնվում էր այդ իրավունքի նվաճումից հետո լուծելու: Ենթադրվում էր, որ թուրքական տիրապետությունից լիակատար ազատագրվելուց հետո, միայն ազատ ու ինքնօրեն պայմաններում, հայ ժողովրդի տարբեր խավերը կարող էին խորհրդակցել, վիճել, քննարկել այն ուղիները, զարգացման այն հեռանկարները, որոնք իրենց տրամադրության տակ կլինեին կամ իրենք ուզում էին ստեղծել[26]*:*

Խուսափելով Արմենական կուսակցության հիմնադրման և հետագա տարիներին ծավալած գործունեության պատմությունը մանրամասն ներկայացնելուց՝ անհրաժեշտ ենք համարում պարզաբանել մի քանի կարևոր հանգամանքներ, որոնք վերաբերում են Արմենական կուսակցություն-Փորթուգալյան – «Արմենիա» թերթ առնչություններին և որոնք բնորոշում են Մ. Փորթուգալյանին որպես հայության ցավով տառապող գործչի ու արդեն նաև՝ խմբագրի: Բանն այն է, որ նա քարոզելով հայության բոլոր խավերի մասնակցությամբ հեղափոխական թեզեր, դեմ էր առանձին կուսակցությունների ստեղծմանը, այդ թվում նաև՝ արմենականների: Արմենականները, սակայն, այլ կարծիքի էին և մի քանի անգամ փորձեցին համոզել նրան, որ դառնա իրենց գաղափարական ու գործնական ղեկավարը, բայց ապարդյուն: Ինչպես հուշագրում է այդ հարցերին լավատեղյակ Սարգիս Չթյանը, դեռ 80-ական թվականներին «Փորթուգալյանը հեղափոխական շարժումներ ղեկավարող մի որևիցե հայկական կազմակերպության հակառակ էր եղել սկզբից և հակառակ էլ մնում էր»[27]*: Նրա սաները, մասնավորապես Արմենական կուսակցության հիմնադիր-առաջնորդ Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանը, 1888, 1890, 1892 թվականներին և հետագայում ևս մի քանի անգամ դիմեցին Փորթուգալյանին՝ խնդրելով դառնալ իրենց ղեկավարը, սակայն «Արմենիայի» հիմնադիրը հետևողականորեն մերժում էր, «համարելով դա վնասակար և խիստ վտանգավոր տաճկահայոց շահերին»*[28]*: Ինչպես վկայում է ինքը՝ Մ. Փորթուգալյանը, «… նույնիսկ մեր սիրելի աշակերտ և թղթակից Մկրտիչ Ավետիսյան Վանեն*

---

[26] *Արմենական կուսակցության ստեղծման պատմության, նրա ծրագրի, կանոնագրի, կարևոր դերակատարների և նմանաբնույթ այլ հարցերի մասին մանրամասն տե՛ս Ս. Սարգսյան. Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921 թթ.):*

[27] *Ս. Չթյանը արմատներով Վանից էր, 1880–90-ական թվականների արմենականների համակիրներից էր, ապա համալրեց ՀՀԴ-ի շարքերը, ավելի ուշ եղել է «Հայրենիք» թերթի խմբագիրներից [տե՛ս «Հայրենիք» (Բոստոն), 1937, -4, էջ 148]:*

[28] *ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13, նաև՝ «Պայքար» (Բոստոն), 1951, մարտի 17, -63:*

թղթակցություններին մեջ իր հիմնած կազմակերպություն «Հայ Հեղափոխական միություն» անվանած էր»[29]…:

1896 թ. արմենականների հիմնադիր ղեկավարներից Գ. Պեռզիկյանը մի շրջաբերական է ուղարկում Մ. Փորթուգալյանին՝ առաջարկելով ավելի ուժեղացնել դրա բովանդակությունը և հրապարակել այն «Արմենիայում»: Որևէ պատասխան չստանալով՝ Գ. Պեռզիկյանը մեկնում է Մարսել և բանակցում Մ. Փորթուգալյանի հետ, սակայն արդյունքում իրավիճակն ավելի է շիկանում: Իսկ արդեն 1897 թ. «Արմենիայի» տնօրեն-խմբագիրը թերթում հրատարակում է «Զգուշություն» վերնագրով հոդված, որի մեջ անթաքույց դրսևորում է իր հակակրանքն արմենականների նկատմամբ: Հոդվածում խոսվում է այն մասին, որ իրեն է հասել կնքված մի փաստաթուղթ՝ «Շրջաբերական Արմենիական կազմակերպության Ե. շրջանակի» վերտառությամբ, որով հայտարարվում է, որ, իբր, «Արմենիական կազմակերպությունը, որ 12 տարիներե ի վեր կգործէ, Արմենիաի կազմակերպած մեկ կուսակցությունն է եղեր»[30]: Շոյված զգալով, որ թերթն ունի հետևորդներ, Մ. Փորթուգալյանը, սակայն, հայտարարում էր, որ «Արմենիան» մինչև այժմ իր անունով որևէ կուսակցություն կազմակերպած չէ դեռ», որ իրենց արմենական հռչակող մարդիկ ոչ միայն թերթի բարեկամները չեն, այլև թշնամիներն են և «Արմենիային վնասելու համար Արմենիաի բարեկամի դիմակով ավրում են» նրա անունն ու համբավը և վերագրում են իրենց ոչ յուրահատուկ բաներ: «Այսպիսիներին ինչ անուն պետք է տալ, արմենական, թե ուրիշ մի բան: Ուստի հարկ կհամարենք զգուշացնել ժողովուրդը… Արմենիական անունով կազմակերպված կուսակցություն մը չկա դեռ և եթե այդպիսի բան մը լինի, կհայտարարվի հատկապես Արմենիա լրագրին մեջ»[31]: Չնայած այս ամենին՝ արմենականները, այնուամենայնիվ, շարունակում էին թերթը համարել իրենց գաղափարական օրգանը և հավատարիմ էին մնում նրա տեսակետներին ու որդեգրած ուղեգծին. «Պետք է նաև որ միությունը ուժ տա յուր նպատակին ծառայող լրագիրներին, օրինակ «Արմենիա»-ին, որ մինչև այժմ ըստ կարողությանն յուր առ ազգն ունեցած պարտքը կատարած է առանց յուր սկզբնավորութենեն շեղելու և հառաջիկային մեջ ավելի պատվաբեր և ազգին օգտավետ թերթ մը լինել կխոստանա»[32]:

Շատ ավելի ուշ, Մ. Փորթուգալյանի հետ լեզու գտնելու, հարաբերությունները կարգավորելու նպատակով 1906 թ. ԱՄՆ-ում բնակվող արմենականները նրան հրավիրեցին Բոստոն: Սակայն վերջինս ոչ միայն անդրդվելի մնաց[33], այլև հանդես եկավ հատուկ հայտարարությամբ. «Արմենիական անունով հեղափոխական կուսակցություն մալ երբեք չենք կազմակերպած, որովհետև մեր կուսակցությունն է արդեն հայ ժողովուրդի հեղափոխական կուսակցությունը: Անոնք, որ կըսեն, թե իրենք հեղափոխական կուսակցություն են Արմենիական անունով, այդ իսկ կցուցնե, թե իրենք դեռ անկարող կգտնվին ըմբռնելու Արմենիաի սկզբունքները, որ իբր լրագրական բեքլամ, իր անունով

---

[29] *«Արմենիա» (Մարսել), -38, 1897:*

[30] *«Արմենիա», -84, 1897:*

[31] *Նույն տեղում:*

[32] *«Արմենիա», -36, 1897:*

[33] *ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13:*

առանձին հեղափոխական շարժում մը գոյացնելու ծրագիր ունեցած չէ երբեք: Այն միակ կազմակերպությունը, որի կազմության մասնակցած է Արմենիաի խմբագիր-տնօրենը, կկոչվեր Հայոց հայրենասիրական միություն: Կազմակերպության մը անունը պետք է ուղղակի որոշե իր նպատակը, այդ կազմակերպության անունը հայրենասիրական էր, բառ մը, որ կներկայացնե նաև Արմենիաի գաղափարն ու նպատակը»[34]: 1908 թ. Փորթուգալյանն արմենականների դեմ գրեթե նույն բովանդակությամբ նոր հոդված հրապարակեց. «Մենք ԵՐԲԵ՛Ք կազմած չենք Արմենական անունով ընկերակցություն մը, թե Արմենիաի խմբագրությունն այդ անունով կազմակերպության մը հետ ԵՐԲԵ՛Ք պաշտոնական որևէ հարաբերություն ունեցած չէ և թե ոչ ոք բնավ իրավունք ունի Արմենիաի անունով գործող կազմակերպություն մը ներկայացնելու»[35]: «Արմենիաի խմբագրությունը վարչական և ելամտական ոչ մի կապակցություն ունեցած չէ Արմենական կազմակերպության հետ…»[36]: Միևնույն ժամանակ, Փորթուգալյանը մի այլ առիթով հավելում է հետևյալը. «Մեր «Զգուշություն» հոդվածեն հետո Ռաֆիի քեռայր Տ. Գևորգ Օտյան կհայտնե, որ Վանի Մեծ դեպքին նախօրյակին, չցանկանալով վիճաբանել կուսակիցներուն հետ իրենց կազմակերպությունը Արմենական կոչելու հարցում, զիջած էր, պայմանով որ իրենց ծրագիր պաշտոնական նամակով մը ղրկվի Արմենիաի խմբագրության, անոր հավանությունն ու գործակցությունն ունենալու համար: Մ. Ավետիսյանի նահատակվելուց հետո այդ նամակը, Արմենական կազմակերպության մը ծրագրին հետ մեկտեղ, սա ղրկեց ինձ եղելությունը բացատրելով: Իսկ երբ Պեռզիկյանը Մարսեյլ եղած ատեն հարցուցի, թե ինչու չէր ղրկած նամակը, ան պատասխանած էր՝ ժամանակ չէր ունեցած: Իրականում Ավետիսյանի և իր ընկերների այդ հանձնարարության իր կողմե չկատարվիլը հատուկ նպատակով մ'եղած էր…»[37]: Այնուհետև Մ. Փորթուգալյանը շարունակում է, որ, չնայած իր առարկություններին, արմենականները «…կշարունակեն տակավին իրենք զիրենք Արմենիական անվանել, փոխանակ «Պեռզյուքյան կամ այսինչյան անվանվելու»[38]:

Մ. Փորթուգալյանի այդպիսի վարքագիծն այլևս չհանդուրժելով՝ 1908 թ. մարտի 6-ին «Գաղափարակցական միության»[39] Եգիպտոսի մասնաճյուղը, որ

---

[34] *«Արմենիա», -44, 1906:*

[35] *«Արմենիա», -38, 1908:*

[36] *«Ազգ» (Բոստոն), 1908, մայիսի 2:*

[37] *«Արմենիա», - 38, 1908:*

[38] *Նույն տեղում:*

[39] *«Գաղափարակցական միությունը» ստեղծվել է 1907-ի օգոստոսին: Արմենական կուսակցության հիմնադիրներից Գ. Պեռզիկյանը, Պարսկահայքի մասնաճյուղերը վերակազմակերպելով, նույն թվականին անցնում է Բուլղարիա, որտեղ Ա. Շիտանյանի հետ ստվարացնում են տեղի արմենականների շարքերը, նրանց են միացնում հնչակյան կենտրոնից դժգոհ □Հեղափոխական Միությունը□ և հռչակում «Գաղափարակցական միության» կազմակերպության ծնունդը: 1907 թ. Լոնդոնում հրատարակված նրանց ծրագրում միության նպատակ է հռչակվում Հայաստանի անկախության նվաճումը. «…զինու զորությամբ ազատել Օսմանյան լուծեն Հայաստանը և կազմել անկե քաղաքականապես ինքնուրույն, անկախ և ազատ Հայկական իշխանություն մը»՝ բացառելով սոցիալիզմի գաղափարախոսությունը,*

գերազանցապես կազմված էր արմենականներից, Բոստոնում լույս տեսնող «Ազգ» թերթում հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ ասվում էր. «Արմենական» կազմակերպությունը թեև ներշնչված է ի միջի այլոց և «Արմենիա» թերթի գաղափարներեն, սակայն ինքնուրույն, անկախ, երկրի իսկական պահանջներեն ծնունդ առած և արտասահման ճյուղավորված հեղափոխական մարմին մը եղած է և յուր գոյության փայլուն ապացույցն ալ զանազան առիթներով ընծայած: Բավական է միայն հիշել Վանի ինքնապաշտպանության կռվի մեջ կատարված յուր առաջնակարգ և պատվաբեր դերը»: Արված հայտարարությունը ճշմարտություն էր: Արմենականները «Արմենիայի» հետ կապված էին միայն գաղափարապես, իսկ վարչական, պրակտիկ գործունեության, ինչպես նաև ֆինանսական հարցերում բոլորովին անկախ էին և գործում էին ինքնուրույն: Մ. Փորթուգալյանն իր «Արմենիայով» ուղղակի «հիմնադիրը չեղավ անդրանիկ հայ հեղափոխական թերթին պես՝ նաև անդրանիկ հայ հեղափոխական կազմակերպությունը եղող «Արմենական» կուսակցության»[40]:

Ավելի ուշ Արմենական կուսակցության անդամներից մեկը «Մ.» ստորագրությամբ «Իրավունք» թերթում առավել խիստ տոնով պատասխանեց Մ. Փորթուգալյանին, նշելով, որ «արմենիական» բառը «Արմենիայի» սեփականությունը չէ և դրա օգտագործման համար պետք չէ նրանից թույլտվություն խնդրել: Ապա նկատում էր, որ Մ. Փորթուգալյանը մերձենալով ՀՀԴ-ին, անհանգստանում է, որ արմենականները միավորվում են Վերակազմյալ հնչակյաններին՝ դրանով հաճոյանալով դաշնակցությանը[41]:

Ամփոփելով՝ նշենք, որ տասնամյակներ շարունակ իրենց «Արմենիայի» հետնորդներ համարող արմենականները Մ. Փորթուգալյանի բռնած դիրքի հետևանքով, ի վերջո, երես դարձրին նրանից և սկսեցին մերձենալ քաղաքական այլ ուժերի: Քննարկելով այդ փոփոխության ընթացքը՝ արևմտահայ նշանավոր մտավորական Համբարձում Երամյանը հետագայում գրում էր, որ արմենականներն իրենց կուսակցությունը կոչում էին «Արմենիայի» անունով, «սակայն Փորթուգալյան այդ կուսակցության բարոյականեն զատ ուրիշ կապակցություն մը չունենալը հայտարարելով՝ պաղություն մը ինկավ վարպետին և երբեմն յուր անունով երդվող աշակերտներուն միջև»[42]:

ГАЗЕТА «АРМЕНИЯ» – ПАРТИЯ АРМЕНАКАН
(К 130-летнему юбилею)

СУРЕН САРГСЯН

օտարի օգնության ակնկալությունը և մահվան դատապարտելով մատնությունն ու դավաճանությունը. տե՛ս Ծրագիր և կանոնագիր Գաղափարակցական միության (Արմենո-միութենական միացյալ կազմակերպություն), Լոնդոն, 1907, էջ Ա:

[40] *Մ. Ն ա թ ա ն յ ա ն. Արմենական կուսակցությունը ծագումեն սկսյալ մինչև Սահմանադրական ռամկավար կուսակցության կազմությունը, Կահիրե, 1990, էջ 14:*

[41] *«Իրավունք» (Վառնա), 1908, ապրիլի 9:*

[42] *Հ. Ե ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., հ. Ա, էջ 255:*

Р е з ю м е

В 80-х годах XIX века рожденная на заре национально-освободительного движения газета «Армения», первенец политической периодической печати, ее редактор М. Португалян имели сложные, часто сопровождавшиеся взаимными обвинениями отношения с первой политической партией Арменакан. Несмотря на то, что арменаканы сами себя считали последователями «Армении» и распространителями ее идей (отсюда и название партии), М. Португалян и его соратники категорически отрицали эту связь и неоднократно заявляли, что партия Арменакан не была создана ими, и они ничего общего с ней не имеют. В историографии и мемуарной литературе по этому поводу также имеются существенные разногласия. Есть даже некоторые авторы, которые ошибочно считают М. Португаляна основателем партии. В действительности, хотя у газеты и партии была некая идеологическая общность (они питались одними и теми же идеологическими корнями), и целью обеих было освобождение западных армян от турецкой деспотии, однако факты свидетельствуют о том, что организационных или каких-либо других связей между ними никогда не было.

“THE ARMENIA” NEWSPAPER –THE ARMENAKAN PARTY
(To the 130th anniversaries)

SUREN SARGSYAN

S u m m a r y

“The Armenia” newspaper, the first of the Armenian political publications that emerged in the 1880s, on the dawn of the national-liberation struggle, and its editor M. Portugalian, had a complex and bumpy relationship with the Armenakan Party, often full of mutual allegations. While people and the Armenakans considered themselves as followers of “The Armenia” newspaper and disseminators of the newspaper’s ideas (this is where they got their name from), M. Portugalian and his team’s members had always categorically denied any affiliation, saying they had nothing to do with the foundation of that body and had no relations with it. There are strong disagreements over the issue in the historiography and memories, too. Some authors even wrongfully mention M. Portugalian as the founder of the party. However, while they both stem from the same ideological roots and both had the same goal of liberating Western Armenians from the Turkish tyranny, the existing evidences indicate that neither organizational nor other ties existed between the two.